



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
03 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-992- Ս  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒԼԻՄԻ  
27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)  
(2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/15485-14 և սեպտեմբերի 23-ի N 06/5-1/15149-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռները ( էլ. կցորդիչներ և ամրակցման դետալներ, երկցող գազալիցքային լամպեր, էլեկտրական մալուխներ, լուսավորման ձգվող էլեմենտներ, էլեկտրական պլաստիկ լուսացուցանակներ` 5 տեղ, 1,454 կգ ընդհանուր քաշով, 41,603.5 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,481 եվրո, և ջերմամեկուսիչ փրփրապլաստ 1,650 տեղ, 1,031.3 կգ ընդհանուր քաշով, 2,062.5 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,469 եվրո, ՄՃՓ ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվա-կանի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպու-թյան կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում;

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ